# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

«28» 01 2018թ.

N: ____________________

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ, սպաներ, սիրելի՛ զինվորներ.

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հայոց բանակի օրվա կապակցությամբ:

Հայոց բանակի կազմավորումը մեր նորանկախ պետության կարևորագույն ձեռքբերումներից մեկն է: Բանակը մեր պետության անկախության, հայ ժողովրդի խաղաղ ու անվտանգ ապրելու գլխավոր երաշխավորն է: Այն ձևավորվեց պատերազմի բովում, երբ հարցականի տակ էր մեր երկրի ամենաթանկ ձեռքբերումը՝ անկախությունը:

Հայոց բանակաշինությանը մասնակցել են ազատամարտիկները, երկրապահներն ու կադրային սպաները, մեր ողջ ժողովուրդը: Մեծ ու անուրանալի է Շիրակի զավակների ներդրումը, որոնցից շատերն այդպես էլ չտեսան հայոց բանակի փառավոր ներկան, քանզի նահատակվեցին հանուն հայրենիքի: Եվ այսօր մենք գլուխ ենք խոնարհում հայրենիքի ազատության ու մեր արժանապատվության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների առջև:

Մեր բանակն այսօր ի վիճակի է հակադարձելու ցանկացած ոտնձգության, ապահովելու մեր անկախ պետականության և մեր ժողովրդի արժանապատիվ ու անվտանգ կյանքը:

Շնորհավորելով Բանակի օրվա կապակցությամբ՝ զինվորներին, սպայական կազմին, արցախյան հերոսամարտի վետերաններին, երկրապահ կամավորականներին, մեր նորօրյա հերոսներին, այսօր դիրքերում և խրամատներում մարտական ծառայություն իրականացնող զինվորներին ցանկանում եմ քաջառողջություն, անսպառ եռանդ, մարտական բարձր ոգի և ամենակարևորը՝ խաղաղություն:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ